Մ. Գրիգորյանին
ուղարկվում է կարդալու
15.09.2017թ
ՀՀ մարդու իրավունքներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
Քարտուղարության ղեկավար
պարոն Տիգրան Մարտիրոսյանին

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

Տեղեկացնում եմ, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը 2017 թվականի սեպտեմբերի 19-ից 20-ը Հելսինկիում (Ֆինլանդիայի Հանրապետություն) մասնակցելու է Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի «Հարաբերություններ և սեռական կրթություն. երեխաների տեղեկացված լինելու իրավունքի իրացումը» խորագրով 21-րդ տարեկան խորհրդաժողովին, իսկ սեպտեմբերի 21-ից 22-ը՝ Բուխարեստում (Ռումինիայի Հանրապետություն) Եվրոպական օմբուդսմանի ինստիտուտի 2017 թվականի Գլխավոր վեհաժողովին:

Նախատեսվում է նաև մասնակցություն Բուխարեստում կայանալիք Ռումինիայի Հանրապետության օմբուդսմանի ինստիտուտի հիմնադրման 20-ամյակի միջոցառմանը և Մարդու իրավունքներին նվիրված միջազգային խորհրդաժողովին:

Այցի նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել 64.200 (վաթսունչորս հազար երկու հարյուր հազար) ՀՀ դրամ արժողությամբ հայկական արտադրանքի կոնյակներ, որոնք Պաշտպանը անձամբ կհանձնի միջոցառման մասնակից բարձրաստիճան պաշտոնատար անձանց՝ իբրև հարգանքի դրսևորում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
օգնական **Ջուլիետա Բաղդասարյան**

15.09.2017թ.